Հայ գրականության հանրապետական օլիմպիադա

2019-2020 ուստարի

(տևողությ ունը՝ 180 րոպե)

IX դասարան

Սիրելի՛ մասնակից. օլիմպիադային մասնակցի՛ր հաղթելու կամքով. հաղթանակդ սրբագործի՛ր հայ գրականության նկատմամբ ունեցած հպարտության և խորին ակնածանքի զգացումով:

Հավատով՝ Ս. Աբազյան

1.Ի՞նչ գիտես Ռափայել Պատկանյանի մասին. ինչպե՞ս է կազմվել Գամառ-Քաթիպա գրական անունը: Ինչպե՞ս կմեկնաբանես հետևյալ քառատողը. արդիակա՞ն է այն այսօր.

Քանի որ իմ զավակունք
Այսպես կու մընան պանդուխտ՝
Ինձ միշտ սըգվոր կը տեսնեք,-
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ...

Գրի՛ր նմանատիպ մի քառատող. տուն հրավիրի՛ր քո տարեկիցներին: 5մ.

2.Գրի՛ր քո կարծիքը մեր օրերի Պեպոների մասին. կա՞ն այսօր Պեպոներ ու Զիմզիմովներ:

Ի՞նչ կտակ է թողել Սունդուկյանը Պեպոյի մասին:(Կարող ես գրել գրական հայերենով): Թումանյանի ասույթը Սունդուկյանի մասին: 5մ.

3.Ի՞նչ շրջասույթներ գիտես Դուրյանի մասին: Նկարարագրի՛ր քո պատկերացրած Դուրյանին: Վերլուծի՛ր «Իմ ցավը» բանաստեղծությունը:

Ո՞վ է հետևյալ վեցնյակի հեղինակը:
Հույզով մեռա՜վ ան, հուշքով՝ կապրի դեռ,
Ծառերուն նըման, որ թարմ ու դալար,
Իր գերեզմանին կ՚ելլեն հովն ի վեր:
Հիացքներ կ՚երթան իրեն հետևեն...
Եվ իր հուշքերն ալ, հավետ անմոլար 5մ.
Ու մի՜շտ ոգևոր դեռ պիտի տևե՜ն:

4. Ո՞վ է հետևյալ տողերի հեղինակը և ո՞ւմ է նվիրված:

Հապճեպ մի շարժումով գիրքը ծալեց, դրեց արկղում ավանդական,
Հետո հավաքեց նամակները ու մի դառն հայացքով երկա՜ր, վերջի՛ն անգամ
Դիտեց թղթերը, արկղը, պատերը սենյակի, արկղը փակեց, հազավ վերարկուն,
Գլխարկը դրեց կռնատակին- և ելավ դուրս:
Գրի՛ր՝ ի՞նչ է պատգամել այս գրողը մեզ: 5մ.

Հանրապետական հանձնաժողովի նախագահ՝ Ս. Աբազյան